



Վահան Թորոպենց

Ճակատագիր

Դուն թռչուններուն ամենեն գեղանին ես, ո՛վ իմ Սիրականս, թեև փետուր մանգամ չունենաս ուսերուդ վրա:

Քու շունչեդ կ'առնեն բոլոր ծաղիկները իրենց բույրերը ու գույները, վարդը՝ իր կարմիրը, մանիշակը՝ իր կապույտը, շուշանը՝ իր ճերմակը:

Քու բերանեն դուրս ելած շունչն է, որ բոլոր ծաղիկները կը վերաշնչեն, և իրենց գոյությունը կը պահեն:

Դուն մայրն ես բոլորին, ատոր համար է, որ երբ անոնցմե մին ճգնվի անկիրթ ոտքի մը տակ, սիրտիդ ձայնը կը լսվի անիմանալի անկյունե մը. կը հեծկլտաս, կը տրտմիս բոլորին համար: Մա՛յրն ես ամենուն:

Տիեզերքն ինձ խոստացավ պարգևել իր գարունը—հսկայական նվագարան բնության: Ես նախընտրեցի լացիդ հեկեկականքները, գոր կը լսեմ՝ ուշ գիշերին, շուշանի մը կամ վարդի մը թուփի տակեն:

Մ'ի փորձեր իմ արցունքներս մազերովդ սրբել, վասնզի վշտագին ա՛նգղը պիտի դառնաս:

Իմ արցունքներս, ո՛վ իմ Սիրականս, հուրի գորությունը ունին և պիտի հրդեհեն մազերդ:

Դուն հայելին ես, որուն խորքին մեջ կանդրադառնան բոլոր գեղեցկությունները և
դուն անգիտակ ես այդ բոլորին:

Քեզի համար խենթ մը ըլլալու շատ ալ չեմ ցավիր, քանի որ անհունությունը ինձ
այդպէ՛ս ճակատագրեց:

1912 թ.